

## ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

### ԵԳԻՊՏՈՍ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Պարսից սատրապությունների ցանկում Եգիպտականն այն բացահիկ վարչական միավորներից մեկն է, որի մասին հոյսն պատմիչ Հերոդոտոսը և մյուս անտիկ հեղինակները պահպանել են բազմաթիվ տեղեկություններ: Ստորև կքննենք Եգիպտական սատրապության վերաբերյալ իին աղբյուրների այն պատմաշխարհագրական տեղեկությունները, որոնց լույսով հնարավոր կդառնա վերականգնել Աքեմենյան տերության այդ կարևոր և ընդարձակ սատրապության վարչական կացության և տարածքի պատկերը:

Չնայած Քսենոփոնը Եգիպտոսի գրավումը վերագրում է Կյուրոս Մեծին<sup>1</sup>, սակայն պարսկական զորքերը միայն մ.թ.ա. 525 թվականի ամռանն են գրավում Եգիպտոսը՝ Մուտրայան, և օգոստոսին Կամբյուսը պաշտոնապես հռչակվում է Եգիպտոսի թագավոր՝ հիմք դնելով փարավոնների XXVII հարստությանը. այդուհետ Կամբյուսը և պարսից հաջորդ արքաները Եգիպտոսում իրենց սկսեցին հորջորջել «Արքա Եգիպտոսի, արքա Երկրների» տիտղոսով<sup>2</sup>: Եգիպտոսից հետո Կամբյուսը գրավում է Ամոնի օազիսը և Նութիայի՝ Եթովպացիների Երկրի՝ Եգիպտոսին սահմանակից հատվածը՝ հասնելով մինչև Նեղոսի Երկրորդ ջրվեժները<sup>3</sup>: Այդուհանդերձ, Քուշը՝ Նութիան, Բեհիսթունի ար-

<sup>1</sup> Քսենոփոն, Կյուրոպետիա, թարգմ.<sup>1</sup> Ս. Կրլյաշարյանի, Եր., 2000, էջ 358-359, 366-367:

<sup>2</sup> Atkinson K. M. T., The Legitimacy of Cambyses and Darius as Kings of Egypt, "Journal of the American Oriental Society", Vol. 76, No. 3, 1956, p. 167.

<sup>3</sup> Фрай Р. "Наследие Ирана", Москва, 1972, стр. 126; Дандамаев М. А. "Политическая история Ахеменидской державы", Москва, 1985, стр. 59, 61-62; Cook J. M., The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, "The Cambridge History of Iran", Vol. 2, 1985, p. 214; Bresciani E., The Persian Occupation of Egypt, "The Cambridge History of Iran", Vol. 2, 1985, p. 502; The Oxford History of Ancient Egypt, ed. by I. Shaw, 2000, p. 374; Briant P., From Cyrus to Alexander. A History of the Persian Empire, translated by P. T. Daniels,

ձանագրության մեջ դեռևս չի հիշատակվում և ավելի ուշ միայն Դարեհ Ա-ի՝ Պերսեպոլիսի արձանագրություններում է այն նշվում, այսինքն՝ վարչական առումով այն Եգիպտոսին միացվում է ավելի ուշ: Լիբրիայի՝ Փուտի նվաճումը նոյնպես վերագրվել է Դարեհ Ա-ին, սակայն կարծում ենք, որ մինչ այդ Կամբյուսը կարողացել էր գրավել այն<sup>4</sup>: Եգիպտոսի նվաճումից հետո Եգիպտացիներն իրենց էթնիկական անվանումով *Miṣirāja* հաճախ են հիշատակվում Միջագետքի բնակավայրերում<sup>5</sup>:

Հերոդոտոսը Աքեմենյան տերության VI սատրապության մասին գրում է. «Եգիպտոսից և Լիբրիայի, Կյուրենեի ու Բարկայի՝ Եգիպտոսին հարող մասերից, որոնք ընդգրկված էին Եգիպտական նահանգի կազմ, ստացվում էր յոթ հարյուր տաղանդ, չհաշված Մոյրիս լիի ձկնորսությունից ստացվող արծաթը: Ահա այդ արծաթից և իբրև հարկ վերցվող ցորենից բացի (այդ երկրից) ստացվում էր յոթ հարյուր տաղանդ: Քանզի Մեմփիսի Սպիտակ բերդում հաստատված պարսիկների և նրանց վարձկանների համար վերցվում էր տասներկու բյուր մեդիմնոս (1 մեդիմնոսը=52,53 լիտր - < Խ. Խ.) ցորեն: Սա վեցերորդ նահանգն էր»<sup>6</sup>:

Առաջին ենթադրությունն այն է, որ Եգիպտական սատրապությունը՝ Մեմփիս կենտրոնով<sup>7</sup>, եղել է ընդարձակ և հարուստ սատրա-

Winona Lake, Indiana, 2002, pp. 53-55; Ray J. D., Egypt 525-404 B. C., The Cambridge Ancient History, Vol. IV, 2006, p. 260. Դարեհ Ա-ն Եգիպտոս է գալիս մ.թ.ա. մոտ 518 թվականին (unt'u Kaper O. E., Petubastis IV in the Dakhla Oasis: New Evidence about an Early Rebellion against Persian Rule and Its Suppression in Political Memory, in: Political Memory in and after the Persian Empire, ed. by J. M. Silverman and C. Waerzeggers, Atlanta, 2015, p. 139), այսինքն՝ համապետական վարչական վերափոխումները դեռևս չեն ավարտվել:

<sup>4</sup> Դանդամաև Մ. Ա., նշվ. աշխ., էջ 62: Cameron G. G., Darius, Egypt, and the “Lands beyond the Sea”, Journal of Near Eastern Studies (այսուհետև՝ JNES), Vol. II, 1943, pp. 309-310.

<sup>5</sup> Դանդամաև Մ. Ա. "Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э.: Социальные институты и идеология", Санкт-Петербург, 2009, стр. 333, 361.

<sup>6</sup> Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ.<sup>8</sup> Ս. Կրկյաշարյանի (այսուհետև՝ Հերոդոտոս), Եր., 1986, III, էջ 91:

<sup>7</sup> Olmstead A. T., History of the Persian Empire, Chicago, 1960, p. 89; Bresciani

պություն՝ ընդգրկելով Եգիպտոսին հարակից տարածքներ, որոնք հարկատվության չափով զիջել են միայն բարելրնական և հնդկական սատրապություններին: Ընդ որում առանձին աղբյուրներից պարզվում է, որ այս սատրապությունը պարսից արքունիքի և բանակի համար կատարում էր բազմաթիվ այլ պարտավորություններ, օրինակ՝ աղ և ջուր էր տրամադրում պարսից թագավորի սեղանի համար<sup>8</sup>:

Սուլայի (Սուսայի, Շոշի) արձանագրություններից մեկում (DSf) Դարեհ Ա-ն հայտնում է, որ Սուլայի պալատի կառուցման համար արծաթը և էքենսափայտը բերվել են Եգիպտոսից, իսկ փղոսկրը՝ Եթովպիայից: Եգիպտացիները նաև հայտնի էին որպես ոսկերիչներ, փայտագործներ, որմնազարդարներ<sup>9</sup>: Մեծ թվով Եգիպտացիներ, ներկայացնելով հասարակական տարբեր շերտեր, ապրում էին Աքեմենյան տերության սրտում՝ Միջագետքում<sup>10</sup>:

Բացի Եգիպտոսից, VI սատրապության մեջ հիշատակվում են Լիբիան, Կյուրենեն և Բարկան, որոնք տարածքով միասին վերցրած զիջում էին Եգիպտոսին: Վերջին Երկուսը ներկայացնում էին համանուն քաղաքներ՝ շրջակա տարածքներով<sup>11</sup>: Հերոդոտոսը հայտնում է, որ լիբիացիները, կյուրենացիներն ու բարկայցիները առանց կովի հանձնվում են Կամբյուսեսին<sup>12</sup>: Ընդհանուր առմամբ Կյուրենեն և Բարկան<sup>13</sup> նոյնպես Լիբիայի մասերն են եղել<sup>14</sup>:

Կյուրենեի մեջ էին մտնում Պլատեա կղզին (Բոմբա ծովածոցի

E., The Persian Occupation of Egypt, p. 518.

<sup>8</sup> Дандамаев М. А. "Ахеменидская империя: социально-административное устройство и культурные достижения", Санкт-Петербург, 2013, стр. 145-146.

<sup>9</sup> Kent R., Old Persian. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., New Haven, 1953, p. 143.

<sup>10</sup> Дандамаев М. А. "Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э.", стр. 333-337, 361.

<sup>11</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, Էջ 181-182:

<sup>12</sup> Անդ, III, 13; IV, Էջ 165:

<sup>13</sup> Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, Lipsiae, 1828, I, 68, p. 93.

<sup>14</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., IV, Էջ 156; 159-160; 199; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, III, 49, pp. 271-272.

կղզիներից մեկը<sup>15</sup>), Մենելաոսի նավահանգիստը (թերևս Մարսա Գարեսը կամ Մարսա Էլ-Ալրան<sup>16</sup>) և Ազիրիսը (Վարփի Էլ-Խալիֆի գետաբերանում<sup>17</sup>), այսինքն՝ ծովափնյա շրջանները, իսկ Բարկայի մեջ՝ Տառեյրա քաղաքը (Ներկայիս Թոքրան<sup>18</sup>): Համաձայն Ստրաբոնի՝ Կյուրենեի կամ Կյուրենահիկայի (Հինգ քաղաքների երկիր<sup>20</sup>) սահմանն արևելքում սկսվել է Կատարափմայից, որտեղ վերջանում էր Եգիպտոսի սահմանը<sup>21</sup>: Բարկայի սահմանն արևմուտքում հասել է մինչև Եվհեսպերիտների երկիրը<sup>22</sup> ներկայիս Բենզազին<sup>23</sup>: Դարեհ Ա-ն գերեվարված բարկացիներին վերաբնակեցնում է Բակտրիայի գյուղերից մեկում, որը հայտնի էր Բարկա անունով<sup>24</sup>: Բարկան՝ հելլենիստական Պտղոմայիսը<sup>25</sup>, որի ավերակները գտնվում են Մեդիմետ Էլ-Մարզի մոտ<sup>26</sup>, իիմնադրել էին կյուրենացիները մ.թ.ա. VI դարի կեսին:

Քսերբսեսի Հելլադա արշավող բանակին Եգիպտացիները տրամադրել էին երկու հարյուր նավ՝ զիջելով միայն փյունիկեցիների և պահեստինյան սիրիացիների՝ երեք հարյուր նավից կազմված նավատորմին: Ընդ որում Եգիպտական նավատորմի հրամանատարը

<sup>15</sup> “A Commentary on Herodotus Books I-IV”, ed. by O. Murray, A. Moreno, New York, 2007, p. 678.

<sup>16</sup> Անդ, էջ 696:

<sup>17</sup> Անդ, էջ 686:

<sup>18</sup> Անդ, էջ 698:

<sup>19</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., IV, էջ 169; 171; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, Lipsiae, 1826, XVIII, 20, p. 247.

<sup>20</sup> Pliny, Natural History, Vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, V, 31, p. 240.

<sup>21</sup> Страбон. География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. А. Странновского. Ленинград, 1964, стр. 737.

<sup>22</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., IV, 171; 204; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, XVIII, 20, p. 247.

<sup>23</sup> Cameron G. G., Darius, Egypt, and the “Lands beyond the Sea”, p. 312; Olmstead A. T., History of the Persian Empire, p. 149.

<sup>24</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., IV, էջ 204:

<sup>25</sup> Страбон. стр. 769; Pliny, V, 31, p. 240.

<sup>26</sup> Скилак Кариандский, Перипл обитаемого моря, Вестник древней истории, 1988, № 2, стр. 269.

Քսերքսեսի հարազատ Եղբայր Աքեմենեսն էր<sup>27</sup>, ինչը, թերևս, վկայում է այն մասին, որ վերջինս նաև Եգիպտոսի սատրապն էր: VI սատրապության ժողովուրդներից միայն լիբիացիներն էին առանձին հրամանատարությամբ տրամադրել հետևազոր և հեծելազոր<sup>28</sup>:

Հերոդոտոսի հաջորդ տեղեկություններն արդեն հնարավորություն են տալիս հստակեցնելու Եգիպտական սատրապության սահմանները: Պատմիչը տարբեր առիթներով հիշատակում է Եգիպտական նշանավոր քաղաքներ Թերեն և Հելիոպոլիսը<sup>29</sup> Թելլ Հիսոր՝ Կահիրեցի 12 կմ հյուսիս-արևելք<sup>30</sup>:

Հերոդոտոսը հաճախ է հիշատակում Թերենի մարզը<sup>31</sup> Վերին Եգիպտոսի IV նոմոսը, որը, կապված լինելով նույնանուն քաղաքի հետ, երեմն ընկալվում էր ավելի մեծ տարածքով՝ Ելեփանտինեից մինչև Ֆայում<sup>32</sup>, որտեղ էլ գտնվել է Հերոդոտոսի և անտիկ մյուս հեղինակների երկերում<sup>33</sup> հիշատակվող Մոյրիս լիճը<sup>34</sup>, որը Ֆայումի մոտ գտնվող Բիրկես Կարուն փոքր լիճն է<sup>35</sup>: Թերեալկան երկրում հիշատակվում են Նեապոլիս և Քեմմիս քաղաքները<sup>36</sup>, որոնցից առաջինը համապատասխանում է հետագա Պոլոնայիսի տարածքին՝ ներկայիս Էլ-Մանջահին, երկրորդը՝ Պանոպոլիսն է<sup>37</sup> ներկայիս Ախ-

<sup>27</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., VII, էջ 89; 97:

<sup>28</sup> Անդ, VII, էջ 71; 86:

<sup>29</sup> Անդ, II, էջ 3; 7:

<sup>30</sup> “A Commentary on Herodotus Books I-IV”, p. 243.

<sup>31</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 4; 42; 69; 91; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Lipsiae, 1828, I, 18, p. 22; Tuplin Ch., The Administration of the Achaemenid Empire, in: Coinage and Administration in the Athenian and Persian Empires: The Ninth Oxford Symposium on Coinage and Monetary History, Oxford, 1987, pp. 123-124.

<sup>32</sup> “A Commentary on Herodotus Books I-IV”, p. 245. Հմմտ. Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 15:

<sup>33</sup> Ստրաբոն, նշվ. աշխ., էջ 729, 746-747: Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, I, 51-52, pp. 71-73; Pliny, V, 50, p. 256.

<sup>34</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 69:

<sup>35</sup> “A Commentary on Herodotus Books I-IV”, p. 350.

<sup>36</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 91:

<sup>37</sup> Ստրաբոն, նշվ. աշխ., էջ 749: Claudio Ptolemaei Geographia, edidit C. F. A.

միմը<sup>38</sup>: Քեմմիս անունով կղզի Հերոդոտոսը հիշատակում է Դելտայում<sup>39</sup>: Իսկ Մոյրիս լճից հարավ-արևելք հայտնի էր Կոկորդիլոսների քաղաքը<sup>40</sup> Եգիպտական Շdyt-ը՝ հելլենիստական և հռոմեական դարաշրջանի Արսինոյտոն պոլիսը կամ Արսինոյան, ներկայիս Մերինետ Էլ-Ֆայումը<sup>41</sup>:

Հերոդոտոսը Եգիպտոսի ծովափի երկարությունը արևելքից արևմուտք հաշվում է վաթառուն պարան (շուրջ 429,60 կմ)<sup>42</sup> Պլինիշնետես ծովախորչից՝ հետագա Ալեքսանդրիա քաղաքի շրջանից մինչև Սերբոնիս լիճը՝ Սարիետ Էլ-Բարդավիլը<sup>43</sup> Կասիոն լեռան մոտ<sup>44</sup>: Նոյն Հերոդոտոսը, նկատի ունենալով Ստորին Եգիպտոսը, հայտնում է, որ Եգիպտոսը տարածվել է արևելքում Արաբական լեռների և արևմուտքում՝ Լիբիայի կողմից, ավազաբլուրների<sup>45</sup>, այսինքն՝ Լիբիական անապատի հյուսիսարևելյան հատվածի միջև: Հոյն հեղինակը նաև հայտնում է, որ հինհացիների համար Եգիպտոսը միայն Դելտան էր, իսկ ծովափը ձգվել է Պերսկա աշտարակ կոչված վայրից մինչև Տարիքեյ՝ «ձկների աղման արհեստանոցները» Պերսիայում<sup>46</sup>: Ստրաբոնը Պերսկա աշտարակը հիշատակում է Նեղոսի Բոլբիտինյան<sup>47</sup> գետաբերանից արևելք՝ Ագնու-Կերասից հետո<sup>48</sup>, իսկ Պերսիան նոյնանում է Էլ-Ֆարամին, Պորտ Սայիդից 40 կմ դեպի հարավ-արևելք<sup>49</sup>: Հերոդոտոսը Դելտան, սկսած ծովափից, հարավում հասցնում է մինչև Կերկասորոս

---

Noebbe, t. I, Lipsiae, 1843, IV, V, 72, p. 264.

<sup>38</sup> Gardiner A. H., Ancient Egyptian Onomastica, Vol. II, 1947, p. 40; “A Commentary on Herodotus Books I-IV”, p. 303.

<sup>39</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 156:

<sup>40</sup> Անդ, II, էջ 148-149:

<sup>41</sup> Gardiner A. H., նշվ. աշխ., էջ 116:

<sup>42</sup> “A Commentary on Herodotus Books I-IV”, pp. 246-247.

<sup>43</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 6:

<sup>44</sup> Անդ, II, էջ 8:

<sup>45</sup> Անդ, II, էջ 15, 113:

<sup>46</sup> Muller C., Fragmenta Historicorum Graecorum, Vol. I, Parisiis, 1841, p. 20, fr. 285.

<sup>47</sup> Ստրաբոն, նշվ. աշխ., էջ 739:

<sup>48</sup> “A Commentary on Herodotus Books I-IV”, p. 252.

քաղաքը<sup>49</sup> ներկայիս Էլ-Վարաքը՝ Կահիրեხց հյուսիս-արևմուտը<sup>50</sup>, որտեղից Նեղոսը երկատվելով մի հոսանքով ուրդվում է ռեափի Պելուսին, իսկ մյուսով՝ դեպի Կանորոս<sup>51</sup> Աբուֆիրից արևմուտը:

Պատմիչը հիշատակում է նաև Նեղոսի Սերեննյուտյան, Սահսյան կամ Տանիսյան<sup>52</sup>, Մենդեսյան և Բուկոյիկյան գետաբերանները<sup>53</sup>: Նկատենք նաև, որ Հերոդոտոսն անձամբ եղել էր Դելտայում, և դա երևում է նրա քազմաթիվ տեղեկություններից, օրինակ, երբ խոսում է Սահս Նշանավոր քաղաքի մասին<sup>54</sup>, որը նոյնանում է ժամանակակից Սա Էլ-Հագարին<sup>55</sup>, կամ Էլ հիշատակում է Մենդեսյան մարզը<sup>56</sup>: Կանոբույան<sup>57</sup> և Սերեննյուտյան գետաբերանների միջև Հերոդոտոսը հիշատակում է Պրոստախտիս կղզին<sup>58</sup>, որի մասին հիշատակում են նաև այլ հեղինակներ<sup>59</sup>: Այս կղզու վրա էր Արտեմիսի՝ Ասոր-Իսիսի տաճարով հայտնի Աստարբերիս քաղաքը<sup>60</sup>, ներկայիս Կոմ Աբու Բիլլուն, որը Ստրաբոնի կողմից հիշատակված Ափրոդիտեի քաղաքն է<sup>61</sup>: Հիմնականում պատմիչը Դելտայում՝ հիշատակում է Բուբաստիս<sup>62</sup> (ներկայիս Թել Բաստան), Բուսիրիս (ներկայիս Աբու Սիրի մոտ), Բուտոն (ներկայիս Թել Էլ-Ֆարայինի մոտ), Պապրեմիս (հյուսիսարևմտյան

<sup>49</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 97:

<sup>50</sup> “A Commentary on Herodotus Books I-IV”, p. 252.

<sup>51</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 15; 17:

<sup>52</sup> Manetho, with an English translation by W. G. Waddel, Cambridge-Massachusetts-London, 1948, Loeb Classical Library, p. 22.

<sup>53</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 17; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, I, 33, pp. 44-45.

<sup>54</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 28; 59:

<sup>55</sup> “A Commentary on Herodotus Books I-IV”, p. 257.

<sup>56</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 42:

<sup>57</sup> Muller C., Fragmenta Historicorum Graecorum, p. 20, fr. 282.

<sup>58</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 41:

<sup>59</sup> Фукидид, История. Пер. Ф. Мищенко. Москва, 2012, стр. 55-56; Страбон, стр. 740; Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I, IV, VI, 49, p. 259.

<sup>60</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 41:

<sup>61</sup> Страбон, стр. 740, 749, 752.

<sup>62</sup> Manetho, pp. 20, 34, 81.

Դելտայում), Անյուսիս (հյուսիսարևելյան Դելտայում՝ Հերակլեոպոլիսը<sup>63</sup>), Նավկրատիս (հյուսիսարևմտյան Դելտայում, Կանորբոյան գետաբերանի արևելյան շրջանում), Մոմեմփիս (Կոմ Էլ-Հիսնը արևմտյան Դելտայում<sup>64</sup>), Անթովլլա (Գյունեկոպոլիսը<sup>65</sup>) և Արքանդրոս (տեղադրությունն անհայտ է)<sup>66</sup>, Հերմոպոլիս (Ներկայիս Աշմոնեն՝ Կահիրեկից հարավ) քաղաքները, որոնք պաշտամունքային կամ այլ հայտնի վայրեր էին<sup>67</sup>: Այս վայրերի թվարկության մեջ պարզվում է, որ Բուտոն գտնվել է Արարիայում<sup>68</sup>, այսինքն՝ հյուսիսարևելյան Դելտայում, ինչը, թերևս, խոսում է այն մասին, որ Հերոդոտոսի ժամանակ Բուտոն եգիպտական սատրապության մեջ չէր: Հետաքրքիր է նաև, որ Հերոդոտոսն ամոնացիներին՝ Սիվա օազիսի կամ «Ամոնի կղզու»<sup>69</sup> բնակիչներին<sup>70</sup>, որտեղ գտնվում էր Ամոն-Զևսի պատգամախոսական տաճարը, համարում է եգիպտացի և եթովպացի գաղթականների խառնուրդ<sup>71</sup>, ինչը նշանակում է, որ այստեղ եղել են նաև եթովպացիներ, որոնց համար նույնպես տաճարը եղել է սրբազն: Ավելի ուշ Արիանոսն Ամոնի օազիսը հիշատակում է Լիրիայի կազմում<sup>72</sup>, ինչը ցույց է տալիս, որ վերջինս համարվել է լիրիական տարածք:

Հերոդոտոսի համար Վերին Եգիպտոսը սկսվել է Մեմփիսից հարավ, այն դեպքում, եթե Դելտայի շրջանը և Մոյրիս լճից հարավ ընկած տարածքը համարվել են Ստորին Եգիպտոս<sup>73</sup>: Ավելի կոնկրետ՝

<sup>63</sup> Ball J., Egypt in the Classical Geographers, Cairo, 1942, p. 18.

<sup>64</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 97:

<sup>65</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 59-63; 67, 97, 137, 163, 169; “A Commentary on Herodotus Books I-IV”, pp. 277, 284, 309, 339, 373.Տե՛ս նաև Տիգրան Կարանդսկի, Պերոպ օբитаемого моря, стр. 263.

<sup>66</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 75:

<sup>67</sup> “A Commentary on Herodotus Books I-IV”, p. 427.

<sup>68</sup> “A Commentary on Herodotus Books I-IV”, p. 268; Colburn H. P., Memories of the Second Persian Period in Egypt, in: Political Memory in and after the Persian Empire, ed. by J. M. Silverman and C. Waerzeggers, Atlanta, 2015, p. 171.

<sup>69</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 42:

<sup>70</sup> Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, «Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987, էջ 91-92:

<sup>71</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 13:

Ստորին Եգիպտոսը Հելիոպոլիսից հասել է մինչև Թերե՛ Դիոսպոլիս<sup>72</sup>, որից հետո հիշատակված Ելեփանտինե քաղաքն արդեն Վերին Եգիպտոսում էր<sup>73</sup>: Վերին Եգիպտոսում են հիշատակվում Թերախ Երկրի Սյունենե քաղաքը՝ ժամանակակից Ասուանը<sup>74</sup>, և Ելեփանտինեն՝ «Փղոսկրե քաղաքը»<sup>75</sup>, որոնց միջև գտնվել են Կրոկի և Մոփի լեռները<sup>76</sup>: Ելեփանտինեն գտնվել է Նեղոսի Առաջին ջրվեժի մոտ, որի շրջանում Հերոդոտոսը հիշատակում է նաև Տարոմպսն՝ Ներկայիս Ջերար կղզին<sup>77</sup>, որը չի նոյնանում Ստրաբոնի Փիլե կղզուն<sup>78</sup>: Ելեփանտինեից հարավ ապրել են Եթովպացիներ, որոնց մայրաքաղաքը Մերուն էր<sup>80</sup> Բակարավիայի շրջանում:

Հերոդոտոսը Եգիպտոսի սահմանն արևմուտքում հասցնում է մինչև Մարեա<sup>81</sup> և Ապիս քաղաքները<sup>82</sup>, որոնցից առաջինը գտնվել է Մարեոսիսի լճից հարավ, իսկ Երկրորդը՝ նոյնանում է Թապոսիրիսին՝ ժամանակակից Աբրուսիրին<sup>83</sup>: Հյուսիս-արևելքում՝ արաբների և ասորեստանցիների ուղղությամբ (ինչը գալիս էր դեռևս նախաքեմենյան ժամանակաշրջանից), պարսիկները կայազոր ունեին Դափնեում՝ ժամանակակից Դաֆանան<sup>84</sup> Պելուսիայում<sup>85</sup>:

<sup>72</sup> Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, I, 15; 45, pp. 21, 64; Manetho, pp. 20, 34, 72, 124.

<sup>73</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 9:

<sup>74</sup> Gardiner A. H., նշվ. աշխ., էջ 5:

<sup>75</sup> Անդ, էջ 2:

<sup>76</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 28:

<sup>77</sup> Անդ, II, էջ 29:

<sup>78</sup> “A Commentary on Herodotus Books I-IV”, p. 259.

<sup>79</sup> Страбон, նշվ. աշխ., էջ 47, 741, 753, 755:

<sup>80</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, 29; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, I, 33, p. 43; Africa W. T., Herodotus and Diodorus on Egypt, JNES, Vol. 22, No. 4, 1963, p. 255.

<sup>81</sup> Фукидид, История, пер. Ф. Мищенко, Москва, 2012, стр. 53; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, I, 68, p. 94; Ray J. D., Egypt 525-404 B. C., p. 259.

<sup>82</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 18; 30:

<sup>83</sup> Ball J., նշվ. աշխ., էջ 17:

<sup>84</sup> Worp K. A., Observations on Some Military Camps and Place Names in Lower

Համաձայն Հերոդոտոսի՝ ամբողջ Եգիպտոսը բաժանված էր մարզերի՝ իրենց կառավարիչներով: Մարզերի առաջին խումբը՝ Բուսիրիսյան, Սահսյան, Քեմմիսյան, Պապրեմիսյան, Պրոսոպոտիս կոչված կղզին, Նաթոյի կեսը (Ստորին Եգիպտոսի XI նոմոսի կազմում<sup>86</sup>), տեղադրվում է Դելտայի արևմտյան և կենտրոնական մասում: Երկրորդ խումբը՝ Թերեյան, Բուրաստիսյան, Ափթիսյան (Ստորին Եգիպտոսի XIV նոմոսի կազմում), Տանիսյան, Մենդեսյան, Սերեննոսյան, Աթրիթիսյան (Ստորին Եգիպտոսի X նոմոսի կազմում), Փարբահսյան (Ստորին Եգիպտոսի XI նոմոսի կազմում), Թմուխայան (այստեղ սխալմամբ է ներկայացված, քանի որ նույնանում է Մենդեսյանին), Օնոփիսյան<sup>87</sup> (Տանթայից հյուսիս՝ Մեհալլաթ Մենոփի շուրջը), Անյուսյան (Դելտայի արևելյան հատվածում՝ Մենզալահ լին հարավարևելյան անկյունում), Մյուեկփորիսյան (Ստորին Եգիպտոսի XX նոմոսի կազմում), տեղադրվում է Դելտայի հարավային և արևելյան մասում<sup>88</sup>:

Հերոդոտոսը հայտնում է, որ Կամբուտեսը Եգիպտոսի հյուպարքու էր նշանակել Արյուանդեսին<sup>89</sup>, այսինքն, եթե նկատի ունենանք, որ VI սատրապությունը լայն առումով հայտնի էր որպես Եգիպտական սատրապություն, ապա Արյուանդեսը Եգիպտոսի սատրապն էր: Վերջինիս փոխարինել է Փերենդատեսը<sup>90</sup>, իսկ նրան՝ մ.թ.ա. 484 թվականին<sup>91</sup> Քսերքսեսի եղբայր Աքեմենեսը, որին Հերոդոտոսը հորջոր-

Egypt, Zeitschrift für Papyrologie und Epigraphik, 87, 1991, p. 293.

<sup>85</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, 30:

<sup>86</sup> Gardiner A. H., Ancient Egyptian Onomastica, Vol. II, p. 146.

<sup>87</sup> Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I, IV, V, 51, p. 260; Pliny, Natural History, vol. II, V, 49, p. 254.

<sup>88</sup> Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 165-166; III, 6; “A Commentary on Herodotus Books I-IV”, p. 365.

<sup>89</sup> Herodotus, with an English translation by A. D. Godley, Vol. II, Cambridge-Massachusetts-London, 1928, Loeb Classical Library, IV, 166, p. 370; Ray J. D., Egypt 525-404 B. C., p. 266.

<sup>90</sup> Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, XVI, 51, p. 56; Дандамаев М. А. "Политическая история Ахеменидской державы", стр. 105; Olmstead A. T., History of the Persian Empire, p. 312.

<sup>91</sup> Дандамаев М. А. "Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э.", стр. 150.

ջում է փոխարքա տիտղոսով<sup>92</sup>, այսինքն՝ Աքեմենյան արքայատոհմի գլխավոր ներկայացուցիչներից մեկին է վատահվել այս կարևոր սատրապության կառավարումը: Մ.թ.ա. 454-403 թվականներին Եգիպտոսի սատրապն էր Արշամեսը<sup>93</sup>, իսկ մ.թ.ա. 342 թվականին՝ Եգիպտոսի վերանվաճումից հետո, Արտաքսերքսես Գ-ն Եգիպտոսի սատրապ է նշանակում Փերենդատեսին<sup>94</sup>:

Ըստ Արիանոսի՝ մ.թ.ա. 334 թվականին Գրանիկոսի ճակատամարտում սպանվում է Եգիպտոսի սատրապ Սավակը<sup>95</sup>, որն, ըստ Էության, եղել է պարսկական բանակի հեծելազորի հրամանատարներից մեկը: Եգիպտոսի սատրապ Մազակը Ալեքսանդր Մակեդոնացուն ենթարկվում է առանց դիմադրության. Եգիպտական քաղաքները՝ Պելոպիումը, Հելիոպոլիսը, Մեմֆիսը, մակեդոնացի նվաճողին ենթարկվում են կամավոր: Ալեքսանդր Մակեդոնացին կարճ ժամանակ անց հիմնադրում է Հին աշխարհի ամենահայտնի քաղաքներից մեկը՝ Ալեքսանդրիան<sup>96</sup>: Արիանոսը հայտնում է նաև, որ Ալեքսանդրը Լի-թիայի կառավարումը հանձնում է Ապոլլոնիդոսին<sup>97</sup>: Սովորաբար Լի-

<sup>92</sup> Herodotus, with an English translation by A. D. Godley, Vol. III, Cambridge-Massachusetts-London, 1938, Loeb Classical Library, VII, 7, p. 308. Հմտ. Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, Wiesbaden, 1994, S. 164.

<sup>93</sup> Дандамаев М. А. "Политическая история Ахеменидской державы", стр. 182; "Aramaic Documents of the Fifth Century B. C.", abridged and revised edition by G. R. Driver, Oxford, 1957, pp. 10-12, 92.

<sup>94</sup> Дандамаев М. А., նշվ. աշխ., էջ 253; Bresciani E., The Persian Occupation of Egypt, p. 526.

<sup>95</sup> Արիանոս, նշվ. աշխ., էջ 68: Հմտ. Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, «Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987, էջ 314; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, XVII, 34, p. 137.

<sup>96</sup> Արիանոս, նշվ. աշխ., էջ 89-90; Ռուփոս, էջ 314, 333-334; Պլուտարք, Александр, XXV, "Избранные жизнеописания", т. II, Москва, 1987, стр. 387-388.

<sup>97</sup> Արիանոս, նշվ. աշխ., էջ 93; Ռուփոս, էջ 337; Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, S. 168; Burstein S. M., Alexander in Egypt: Continuity or Change? in: Achaemenid History, VIII, Continuity and Change, ed. by Heleen Sancisi-Weerdenburg, Leiden, 1994, p. 385.

թիայի տարածքն արևմուտքում հասցել է մինչև Զիբրալթար<sup>98</sup>, սակայն Մակեորնիայի թագավորն, ըստ Երևոյթին, միայն Սիվայի օազիսը<sup>99</sup> հարակից շրջաններով դարձնում է առանձին վարչական միավոր: Արիանոսը մի տեղում կողք կողքի հիշատակում է Եգիպտոսը և Կիրենան<sup>100</sup>, այսինքն՝ Եգիպտոսին սահմանակից աֆրիկան շրջանները<sup>101</sup>: Մեր կարծիքով Կիրենա-Կյուրենեի տակ պետք է հասկանանք Լիբիայի ծովափնյա մասը՝ Սիվայից հյուսիս՝ Ալեքսանդրիայից և Մարենոտիս լճից արևմուտքը<sup>102</sup>, այն դեպքում, եթե Հերոդոտոսը Լիբիան և Կյուրենեն տարբերակում էր:

Ալեքսանդր Մակեորնացու մահից հետո Եգիպտոսի և աֆրիկյան ժողովուրդների սատրապ է դառնում Պտղոմեոսը<sup>103</sup>:

Եգիպտոսը՝ որպես պարսիկներին հայտակ երկիր, հիշատակվում է Բեհիսթունի արձանագրությունից սկսած<sup>104</sup>: Դարեհ Ա-ի՝ Պերսեպոլիսի արձանագրություններից մեկում՝ DPh-ում, Քուշը հիշատակվում է որպես տերության հարավարևմտյան ծայրամաս<sup>105</sup>: Նոյն թագավորի՝ Նաղշե Ռոստամի արձանագրության մեջ (DNA) Եգիպտոսը, Լիբիան, Եթովպիան արդեն հիշատակվում են միասին. Եգիպտոսն առանձին, իսկ Լիբիան և Եթովպիան՝ կողք կողքի<sup>106</sup>: Աքեմենյան թագավորի հրամանով կառուցվում է նաև Սուեզի ջրանցքը<sup>107</sup>: Դարեհ Ա-ն

<sup>98</sup> Արիանոս, նշվ. աշխ., էջ 201:

<sup>99</sup> Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, S. 173. Սիվայի կոռնաքաղաքական նշանակության մասին տե՛ս Bowden B., Alexander in Egypt: Considering the Egyptian Evidence, in: Alexander in Africa, ed. Ph. Bosman, Acta Classica Supplementum V, Pretoria, 2014, pp. 38-55.

<sup>100</sup> Արիանոս, նշվ. աշխ., էջ 251:

<sup>101</sup> Ռուսինոս, նշվ. աշխ., էջ 337:

<sup>102</sup> Հմմտ. Ռուսինոս, նշվ. աշխ., էջ 334:

<sup>103</sup> Անդ, էջ 596; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, XVIII, 3, p. 228; The Oxford History of Ancient Egypt, p. 389; Curtius Rufus, Histories of Alexander the Great, Book 10, transl. by J. C. Yardley, with Introduction and Historical Commentary by J. E. Atkinson, Oxford, 2009, p. 220.

<sup>104</sup> Kent R., նշվ. աշխ., էջ 117:

<sup>105</sup> Նոյն տեղում, էջ 136:

<sup>106</sup> Նոյն տեղում, էջ 137:

<sup>107</sup> Նոյն տեղում, էջ 147:Տե՛ս նաև Kent R., The Darius Suez c Inscription, JNES,

իրեն հայտարարում էր Վերին և Ստորին Եգիպտոսի տիրակալ, որի տիրապետության տակ էին տափաստանների և լեռների երկրները<sup>108</sup>, այսինքն՝ Եղակի դեպք, երբ չեն թվարկվում հպատակ ժողովուրդները կամ երկրները: Դարեւ Ա-ի Եգիպտական հիերոգլիֆ արձանագրությունում Եգիպտոսը, Լիբիան և Նուբիան հիշատակվում են կողք կողքի, աշխարհագրական հերթականությամբ<sup>109</sup>:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ Եգիպտոսն Աքեմենյան տերության հարուստ և ընդարձակ սատրապություններից մեկն էր, որտեղ Աքեմենյան թագավիրները մշտապես ձգտում էին ռազմաքաղաքական-տնտեսական գործուն միջոցներով ամուր պահել իրենց իշխանությունը: Վարչական առումով VI սատրապությունը բաժանված էր չորս ենթաշրջանների՝ Եգիպտոս, Լիբիա, Կյուրենե և Բարկա:

## KHORIKYAN HOVHANNES

### EGYPT IN THE SATRAPIC DIVISION SYSTEM OF ACHAEMENID PERSIA

The Egyptian Satrapy had the first-rate importance for Achaemenid Persia. Many important and wrinkled issues on the administrative policy and historical geography of the VI Satrapy were examined in the article, the elucidation of which has an important meaning for studying the history of Achaemenid Persia. Analysis of informations received from Herodotus and other ancient sources shows that Egypt had great economic and military importance to Persian Court. The VI Satrapy was divided into four subdistricts: Egypt, Libya, Cyrene and Barca.

---

Vol. I, 1942, pp. 415-421; Lloyd A. B., Darius I in Egypt: Suez and Hibis, in: Persian Responses: Political and Cultural Interactions with (in) the Achaemenid Empire, ed. C. Tuplin, Swansea, 2007, pp. 99-115.

<sup>108</sup> Roaf M., The Subject Peoples on the Base of the Statue of Darius, Cahiers de la Délégation Archéologique Française en Iran, 4, 1974, p. 75.

<sup>109</sup> Yoyotte J., Les inscriptions hiéroglyphiques. Darius et l'Égypte, Journal Asiatique, t. 260, Paris, 1972, f. 3-4 pp. 258-259.